

Հայաստանի դիրքը համաշխարհային
SS ոլորտում. «**2005-2006թթ.**
Համաշխարհային տեղեկատվական
տեխնոլոգիաների զեկուլցի»
արդյունքները

Մանուկ Հերգնյան
«Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն

Երեւան, ապրիլի 3, 2006թ.



Համաշխարհային տնտեսական ֆորում

Ոչ առևտրային անկախ կազմակերպություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է ձեռներեցության զարգացմանը, տնտեսական աճի խթանմանը եւ սոցիալական առաջընթացին:

Ապահովում է քաղաքական, գիտական եւ գործարար շրջանակների առաջնորդների՝ աշխարհի կացության բարելավմանը միտված համագործակցության լայն ասպարեզ:

Հիմնական գրասենյակը գտնվում է Ժնևում, Շվեյցարիա:

ՀՏՖ-ի կողմից կազմակերպվող ամենամյա գագաթաժողովը Դավոսում համաշխարհային քաղաքական, գործարար եւ հասարակական առաջնորդների ամենաներկայացուցչական հավաքներից է:



Ունի բազմաթիվ այլ ծրագրեր, նախաձեռնություններ, օրինակ՝

- Ռեգիոնալ գագաթաժողովներ
- ՀՏՖ-ն Ռուսաստանում

Մրցունակության համաշխարհային ծրագիր


Զեկույցների եւ տարբեր նախաձեռնությունների միջոցով նպատակ ունի հայտնաբերել տնտեսական աճի խոչընդոտները եւ առաջարկել դրանց հաղթահարմանը ուղղված ռազմավարություններ:

- Հիմնական արտադրանքը՝ «Մրցունակության համաշխարհային զեկույց»:
- Պատրաստում եւ հրատարակում է առանձին տարածաշրջաններին նվիրված զեկույցներ եւ «Տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային զեկույցը» (առաջին անգամ թողարկված 2002թ.)՝ INSEAD-ի (Ֆրանսիա) հետ համատեղ:



Համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաների զեկույց (ՀՏՏԶ)

- ▶ Ցանցային պատրաստվածության թեմայի վերաբերյալ ամենաընդգրկուն տվյալների շտեմարանը
- ▶ Գնահատում է տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաներից (ՏՀՏ) օգտվելու՝ երկրների պատրաստվածությունը (համեմատական ուժեղ եւ թույլ կողմեր)
- Բացառիկ գործիք է երկրների համեմատական վերլուծության եւ մրցակցային վերլուծության համար:
- Պատրաստվում է աշխարհի առաջատար գիտնականների, ինչպես նաեւ ՄՀԶ-ում ներառված երկրներում Համաշխարհային տնտեսական ֆորումի գործընկեր (հետազոտական) ինստիտուտների հետ համագործակցության արդյունքում:



Հայաստանում ՀՏՖ-ի գործընկեր կազմակերպությունը «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոնն է:
Հայաստանը ՀՏՏԶ-ում ներառվել է առաջին անգամ:

Համաշխարհային տեղեկատվական տեխնոլոգիաների զեկույց


Ընկերությունների ղեկավարների կարծիքի հարցում

- Գնահատման ժամանակ Մրցունակության համաշխարհային ծրագիրն օգտվում է «*կոշտ տվյալներից*» (հանրությանը մատչելի վիճակագրական տվյալներ) եւ «*հարցաշարային տվյալներից*» (ընկերությունների ղեկավարների հարցում):
- Ընկերությունների ղեկավարների հարցումը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել տարբեր երկրների առաջատար գործարարների կարծիքների մասին: Հարցման արդյունքներն ունեն կարեւորագույն նշանակություն, մասնավորապես՝ այն ոլորտների եւ ցուցանիշների դեպքում, որտեղ չկան վստահելի վիճակագրական տվյալներ (կոշտ տվյալներ):
- Հարցման մասնակիցները համեմատում են իրենց երկրի բիզնես միջավայրը, երկրի տնտեսական վիճակը եւ բազմաթիվ այլ պարամետրեր՝ համաշխարհային ստանդարտների հետ:
- Հարցվողների ընտրանքը կազմվում է ՀՏՖ գործընկեր կազմակերպության կողմից յուրաքանչյուր երկրում այնպես, որ ընտրանքի կառուցվածքը (տոկոսային հարաբերությամբ) անպայմանորեն արտացոլի տվյալ երկրի Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը՝ ըստ ճյուղային բաշխվածության, ընկերությունների չափերի: Ցանկալի է, որ հարցվող ընկերությունն ունենա նաեւ միջազգային փորձ:

Ցանցային պատրաստվածության համաթիվ

- Ցանցային պատրաստվածության համաթիվը (ՑՊՀ) սահմանվում է՝ որպես ՏՀՏ զարգացումներին մասնակցելու եւ դրանցից օգտվելու՝ տվյալ երկրի պատրաստվածության աստիճանը:
- ՑՊՀ-ն օգտակար գործիք է կարելուր քաղաքական որոշումներ կայացնողների համար՝ ազգային մրցունակության բարձրացման նպատակով երկրի ռազմավարական ուղղվածության նախագծման տեսակետից
- ՑՊՀ-ն հնարավորություն է տալիս երկրին՝ համադրել իր ՏՀՏ գործունեությունը եւ որոշել քաղաքականության արդյունավետությունը
- ՑՊՀ-ն օգնում է ընդգծել/բացահայտել որոշակի երկրում այն ոլորտները, որոնք լավ կամ վատ են գործում՝ համեմատած այլ երկրների հետ, եւ տրամադրում է լավագույն փորձի օրինակներ:

Ցանցային պատրաստվածության համաթիվ



Ցանցային պատրաստվածության համաթիվ, Հայաստան

Հիմնական ցուցանիշներ	
Բնակչություն (մլն.)	3.05
ՀՆԱ մեկ շնչի հաշվով (PPP ԱՄՆ դոլար), 2004	3,806
Ինտերնետ օգտագործողները 100 բնակչի հաշվով, 2003	3.68
Ինտերնետի թողունակությունը (Mbps/10,000 բնակչի հաշվով)	0.3
Համաթիվ	Տեղ
Աճի մրցունակության համաթիվ	79
Ցանցային պատրաստվածության համաթիվ(2005-2006)	86
Միջավայրի բաղադրիչի համաթիվ	87
<i>Շուկայական միջավայրի ենթահամաթիվ</i>	70
<i>Քաղաքականության /կարգավորման միջավայրի ենթահամաթիվ</i>	101
<i>Ենթակառուցվածքների միջավայրի ենթահամաթիվ</i>	71
Պատրաստվածության բաղադրիչի համաթիվ	78
<i>Անհատների պատրաստվածության ենթահամաթիվ</i>	69
<i>Բիզնեսի պատրաստվածության ենթահամաթիվ</i>	89
<i>Կառավարության պատրաստվածության ենթահամաթիվ</i>	81
Օգտագործման բաղադրիչի համաթիվ	101
<i>Անհատների օգտագործման ենթահամաթիվ</i>	79
<i>Բիզնեսի օգտագործման ենթահամաթիվ</i>	109
<i>Կառավարության օգտագործման ենթահամաթիվ</i>	89

Ցանցային պատրաստվածության համաթիվ, Հայաստան

Միջավայրի բաղադրիչի համաթիվ

Համաթիվ	Տեղ	Համաթիվ	Տեղ
<u>Շուկայական միջավայրի ենթահամաթիվ</u>	70	<u>Քաղաքականության/կարգավորման միջավայրի ենթահամաթիվ</u>	101
Գիտնականների եւ ճարտարագետների առկայությունը, 2005	26	Օրենսդիր մարմինների արդյունավետությունը, 2005	96
Վենչուրային կապիտալի առկայությունը, 2005	99	ՏՀՏ-ին վերաբերող օրենքները, 2005	94
Տինանսական շուկայի զարգացածության մակարդակը, 2005	109	Դատական համակարգի անկախությունը, 2005	107
Տեխնոլոգիական պատրաստվածությունը, 2005	96	Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, 2005	107
Քլաստերների զարգացման մակարդակը, 2004	79	Իրավական դաշտի արդյունավետությունը, 2005	91
Գիտահետազոտական ինստիտուտների որակը, 2005	59	Սեփականության իրավունքները, 2005	65
ԱՄՆ-ում գրանցված պատենտների թիվ, 2004	57	Ինտերնետ ծառայություններ մատուցողների ոլորտում մրցակցության որակը, 2005	108
Բարձրագույն կրթության համակարգում ուսանողների թիվը, 2003	66	<u>Ենթակառուցվածքների միջավայրի ենթահամաթիվ</u>	71
Պետական կառավարման բեռը, 2005	55	Հեռախոսագծերի թիվը, 2003	65
Հարկման աստիճանը եւ ազդեցությունը, 2005	51	Ապահով ինտերնետ սերվերներ, 2004	81
Բիզնեսի գրանցման գործընթացի տեւողությունը, 2005	28	Ինտերնետ հոսթեր, 2003	81
Բինեսի գրանցման ընթացակարգերի քանակը, 2005	53	Էլեկտրաէներգիայի արտադրությունը, 2002	71
Տեղական մրցակցության ինտենսիվությունը, 2005	111		

Ցանցային պատրաստվածության համաթիվ, Հայաստան

Պատրաստվածության բաղադրիչի համաթիվ

Համաթիվ	Տեղ	Համաթիվ	Տեղ
Անհատների պատրաստվածության ենթահամաթիվ	69	Բիզնեսի պատրաստվածության ենթահամաթիվ	89
Մաթեմատիկայի եւ ճշգրիտ գիտությունների ուսուցման որակը, 2005	36	Աշխատողների վերապատրաստման աստիճանը, 2005	89
Կրթական համակարգի որակը, 2005	55	Տեղական մասնագիտացում ունեցող հետազոտական եւ կրթական ծառայությունները, 2005	90
Հանրակրթական դպրոցների որակը, 2005	63	Կառավարման դպրոցների որակը, 2005	96
Դպրոցներում ինտերնետի մատչելիությունը, 2005	100	Ընկերությունների գիտահետազոտական ծախսերը, 2005	90
Գնորդների խստապահանջությունը, 2005	90	Ընկերությունների ամսական հեռախոսավճարը, 2003	84
Գնորդների ճկունությունը, 2004	90	Տեղական մատակարարողների որակը, 2005	80
Լարային հեռախոսակապի միացման վճար, 2003	72	ԲՈՒՀ -տնտեսություն հետազոտական համագործակցությունը, 2005	82
Լարային հեռախոսակապի ամսական բաժանորդավճար, 2003	63	Գիտական եւ տեխնիկական հոդվածների թիվը ամսագրերում, 2001	48
Կառավարության պատրաստվածության ենթահամաթիվ	81		
Կառավարության համար ՏՀՏ-ի գերակայությունը, 2005	64		
Բարձր տեխնոլոգիական ապրանքների պետական գնումները, 2005	77		
ՏՀՏ կարելությունը կառավարության ապագայի տեսլականի համար, 2005	64		
Գիտահետազոտական ոլորտի կառավարության սուբսիդավորումը, 2004	58		
Էլ.-մասնակցության համաթիվ, 2004	86		
Ին-հատման ուսուցումը 2004	78		

Ցանցային պատրաստվածության համաթիվ, Հայաստան

Օգտագործման բաղադրիչի համաթիվ

Համաթիվ	Տեղ	Համաթիվ	Տեղ
Անհատների օգտագործման ենթահամաթիվ	79	Բիզնեսի օգտագործման ենթահամաթիվ	109
Բջջային հեռախոսներ, 2003	103	Օտարերկրյա տեխնոլոգիաների արտոնագրերի ձեռքբերման կարելությունը, 2005	101
Հեռախոսային բաժանորդներ, 2003	88	Ընկերությունների մակարդակով նոր տեխնոլոգիաների յուրացումը, 2005	49
Անհատական համակարգիչներ, 2003	89	Նորարարությունների ներուժը, 2005	48
Հեռախոսագծեր, 2003	65	Նոր հեռախոսագծերի առկայությունը, 2004	104
Հեռուստացույցներ, 2002	48	Բջջային հեռախոսների առկայությունը, 2005	115
Հատկացված կապուղով (DSL) Ինտերնետի բաժանորդների թիվը, 2003	83	Գործարարության համար ինտերնետի օգտագործման աստիճանը, 2005	91
Հեռախոսային մոդեմով ինտերնետային բաժանորդների թիվը, 2003	68	Կառավարության օգտագործման ենթահամաթիվ	89
Ինտերնետից օգտվողների քանակը, 2003	86	SՀՏ-ների խթանման գծով կառավարության հաջողությունը, 2005	84
Ինտերնետի էլք ունեցող տնային տնտեսությունների թիվը, 2005	66	Ինտերնետային ծառայությունների առկայությունը, 2005	110
Ինտերնետի թողունակությունը, 2002	96	SՀՏ արտադրողականությունը, 2005	100
		SՀՏ միջոցների տարածումը կառավարությունում, 2005	45

Ցանցային պատրաստվածության համաթիվ Առաջատար 20 երկրները

Երկիր	Միավոր	Տեղ
ԱՄՆ/United States	2.02	1
Սինգապուր/Singapore	1.89	2
Դանիա/Denmark	1.80	3
Իսլանդիա/Iceland	1.78	4
Ֆինլանդիա/Finland	1.72	5
Կանադա/Canada	1.54	6
Թայվան/Taiwan	1.51	7
Շվեդիա/Sweden	1.49	8
Շվեյցարիա/Switzerland	1.48	9
ՄԲ/United Kingdom	1.44	10
Հոնգ Կոնգ/Hong Kong SAR	1.44	11
Հոլանդիա/Netherlands	1.39	12
Նորվեգիա/Norway	1.33	13
Հվ. Կորեա/Korea, Rep.	1.31	14
Ավստրալիա/Australia	1.28	15
Ճապոնիա/Japan	1.24	16
Գերմանիա/Germany	1.18	17
Ավստրիա/Austria	1.18	18
Իսրայել/Israel	1.16	19
Իռլանդիա/Ireland	1.15	20

Ցանցային պատրաստվածության համաթիվ Հետնապահ 20 երկրները

Երկիր	Միավոր	Տեղ
Վրաստան/Georgia	-0.82	96
Բոսնիա-Հերցեգովինա/Bosnia and Herzegovina	-0.87	97
Գվատեմալա/Guatemala	-0.88	98
Կամերուն/Cameroon	-0.88	99
Հոնդուրաս/Honduras	-0.89	100
Մոզամբիկ/Mozambique	-0.94	101
Մադագասկար/Madagascar	-0.99	102
Ղրղզստան/Kyrgyz Republic	-1.01	103
Կամբոջիա/Cambodia	-1.03	104
Զիմբաբվե/Zimbabwe	-1.04	105
Ալբանիա/Albania	-1.04	106
Էկվադոր/Ecuador	-1.07	107
Բենին/Benin	-1.07	108
Բոլիվիա/Bolivia	-1.1	109
Բանգլադեշ/Bangladesh	-1.11	110
Գայանա/Guyana	-1.11	111
Նիկարագուա/Nicaragua	-1.14	112
Պարագվայ/Paraguay	-1.23	113
Չադ/Chad	-1.36	114
Եթովպիա/Ethiopia	-1.39	115

Ցանցային պատրաստվածության համաթիվ ԱՊՀ երկրներ

Երկիր	Միավոր	Տեղ
Ղազախստան/Kazakhstan	-0.24	60
ՌԴ/Russian Federation	-0.39	72
Ադրբեջան/Azerbaijan	-0.4	73
Ուկրաինա/Ukraine	-0.49	76
Հայաստան/Armenia	-0.72	86
Տաջիկստան/Tajikistan	-0.77	93
Մոլդովա/Moldova	-0.78	95
Վրաստան/Georgia	-0.82	96
Ղրղզստան/Kyrgyz Republic	-1.01	103

Միջավայրի բաղադրիչի համաթիվ

Առաջատար 10 երկրները

Երկիր	Միջավայրի բաղադրիչի համաթիվ	Շուկայի ենթահամաթիվ	Քաղաքականության /կարգավորման ենթահամաթիվ	Ենթակառուցվածքների ենթահամաթիվ
Իսլանդիա/Iceland	1	5	5	1
ԱՄՆ/United States	2	4	4	2
Սինգապուր/Singapore	3	1	2	15
Ֆինլանդիա/Finland	4	8	7	5
Դանիա/Denmark	5	14	1	6
Կանադա/Canada	6	17	15	4
Նորվեգիա/Norway	7	18	13	3
Շվեյցարիա/Switzerland	8	7	11	11
Ավստրալիա/Australia	9	29	8	8
Թայվան/Taiwan	10	3	25	13

Միջավայրի բաղադրիչի համաթիվ ԱՊՀ երկրները

Երկիր	Միջավայրի բաղադրիչի համաթիվ	Շուկայի ենթահամաթիվ	Քաղաքակա- նության /կարգավորման ենթահամաթիվ	Ենթակառուց- վածքների ենթահամաթիվ
Ղազախստան/Kazakhstan	58	56	63	62
Ադրբեջան/Azerbaijan	67	55	74	72
ՌԴ/Russian Federation	78	80	95	45
Ուկրաինա/Ukraine	84	87	93	54
Վրաստան/Georgia	86	78	90	73
Հայաստան/Armenia	87	70	101	71
Տաջիկստան/Tajikistan	88	95	78	83
Մոլդովա/Moldova	94	108	88	67
Ղրղզստան/Kyrgyz Republic	107	107	105	78

Պատրաստվածության բաղադրիչի համաթիվ

Առաջատար 10 երկրները

Երկիր	Պատրաստվածության բաղադրիչի համաթիվ	Անհատների պատրաստվածության ենթահամաթիվ	Բիզնեսի պատրաստվածության ենթահամաթիվ	Կառավարության պատրաստվածության ենթահամաթիվ
Սինգապուր/Singapore	1	1	12	1
ԱՄՆ/United States	2	14	1	2
Ֆինլանդիա/Finland	3	2	4	7
Դանիա/Denmark	4	8	5	3
ՄԲ/United Kingdom	5	20	7	5
Կանադա/Canada	6	10	11	8
Հվ. Կորեա/Korea, Rep.	7	19	20	4
Թայվան/Taiwan	8	7	16	9
Հոլանդիա/Netherlands	9	4	13	10
Գերմանիա/Germany	10	21	3	14

Պատրաստվածության բաղադրիչի համաթիվ ԱՊՀ երկրները

Երկիր	Պատրաստվածության բաղադրիչի համաթիվ	Անհատների պատրաստվածության ենթահամաթիվ	Բիզնեսի պատրաստվածության ենթահամաթիվ	Կառավարության պատրաստվածության ենթահամաթիվ
ՌԴ/Russian Federation	55	46	53	72
Ղազախստան/Kazakhstan	56	55	62	56
Ուկրաինա/Ukraine	59	60	60	54
Ադրբեջան/Azerbaijan	77	84	69	75
Հայաստան/Armenia	78	69	89	81
Տաջիկստան/Tajikistan	89	81	103	93
Դրոգստան/Kyrgyz Republic	90	83	112	87
Մոլդովա/Moldova	98	97	96	99
Վրաստան/Georgia	101	90	100	110

Օգտագործման բաղադրիչի համաթիվ

Առաջատար 10 երկրները

Երկիր	Օգտագործման բաղադրիչի համաթիվ	Անհատների օգտագործման ենթահամաթիվ	Բիզնեսի օգտագործման ենթահամաթիվ	Կառավարության օգտագործման ենթահամաթիվ
Դանիա/Denmark	1	2	5	2
Սինգապուր/Singapore	2	14	10	1
Շվեդիա/Sweden	3	1	8	14
Իսլանդիա/Iceland	4	7	7	5
Թայվան/Taiwan	5	9	9	4
ԱՄՆ/United States	6	12	1	9
Հվ. Կորեա/Korea, Rep.	7	5	14	6
Ֆինլանդիա/Finland	8	15	6	8
Հոնգ Կոնգ/Hong Kong, SAR	9	6	18	10
Շվեյցարիա/Switzerland	10	3	12	29

Օգտագործման բաղադրիչի համաթիվ

ԱՊՀ երկրները

Երկիր	Օգտագործման բաղադրիչի համաթիվ	Անհատների օգտագործման ենթահամաթիվ	Բիզնեսի օգտագործման ենթահամաթիվ	Կառավարության օգտագործման ենթահամաթիվ
Ղազախստան/Kazakhstan	62	77	72	43
Ադրբեջան/Azerbaijan	65	83	70	53
ՌԴ/Russian Federation	73	53	78	91
Մոլդովա/Moldova	80	73	91	71
Ուկրաինա/Ukraine	85	62	86	95
Վրաստան/Georgia	96	78	82	100
Տաջիկստան/Tajikistan	97	98	106	72
Հայաստան/Armenia	101	79	109	89
Դրոգստան/Kyrgyz Republic	110	93	113	103

Հիմնական ուղերձներ – Ախտանիշեր

Գլոբալ մրցունակություն


SZS դառնում է տնտեսական աճի կարևոր շարժիչ, ավելի շատ երկրներ են որդեգրում ագրեսիվ SZS ուղղված քաղաքականություն, զարգացման տեմպը աննախադեպ է: Հայաստանը հետ է մնում համեմատելի շատ երկրներից՝ չկարողանալով օգտագործել իր ուժեղագույն մրցակցային առավելություններից մեկը:

Չնայած Հայաստանում հայտարարված SS գերակայությանը, այն հետ է մնում SZS զարգացումների մասնակցելու և դրանից օգտվելու պատրաստվածության աստիճանով:

Տնտեսության ցանցավորում

SZS-ից օգուտներ քաղելը պահանջում է տնտեսության մեջ տեխնոլոգիաների դերի լայն և ընդգրկուն ընկալում ի հակադրություն ներկայումս Հայաստանում գերակշռող նեո կենտրոնացվածությանը SS արդյունաբերության վրա: Հայաստանի SS արդյունաբերության զարգացումը չի խարսխված SZS գործիքների լայն օգտագործմամբ պայնավորված երկրի ընդհանուր զարգացման վրա: Դրա տրամաբանությունը հետևում է “օազիսի” մոդելին:

Հիմնական ուղերձներ – Ախտորոշում



Հիմնական ուղերձներ – Ախտորոշում


Շեղված կիզակետ

Ընթացակարգային բարելավումները, ընդհանուր (ոչ կոնկրետ) միջոցառումները, կառավարության և մասնավոր հատվածի կողմից նախաձեռնվող քայլերի սահմանափակ ընդգրկունությունը չեն ապահովում երկրում ՏՀՏ զարգացման համար իրական խթան : Միջավայրի միայն մի քանի ընտրված բաղադրիչների բարելավումը բավարար չէ: Այլ գործոններ կարող են դառնալ արգելակող խոչընդոտ: Հիմնական լծակները, որոնք կարող են խթանել թռիչքը, դեռևս միանշանակորեն չեն ընկալվում բոլոր շահագրգիռ մասնակիցների կողմից:


Ռազմավարական
ընտրության
բացակայություն

Չնայած Հայաստանում “ՏՏ պատմության” նշմարելի գովազդմանը՝ դեռևս չի կայացել մրցակցային մոդելի ռազմավարական ընտրությունը: ՏՏ ոլորտում Հայաստանը դեռ մրցում է իր բնական ռեսուրսների շահագործման հաշվին, այն է՝ բարձր ինտելեկտուալ պոտենցիալ ունեցող աշխատուժի: Անհրաժեշտ է մրցակցային զարգացման հաջորդ փուլի անցման մոդել, որը կպահանջի խոշորածավալ ներդրումներ ինչպես մարդկային կապիտալում, այնպես էլ տեխնոլոգիաներում և ենթակառուցվածքներում:

Հիմնական ուղերձներ - *Գործողություններ*



- Չկա SS ոլորտի բացահայտ նպատակադրում
Նախնական քայլերը կատարվում են մասնավոր հատվածի կողմից, որին հետևում են պետության ջանքերը
- Տնտեսության զարգացման մեջ ՏՀՏ դերի հավասարակշռված պատկերացում պետության եւ բիզնեսի կողմից
- Հանրային հատվածը շատ շուտ ընդունում է լայնորեն օգտագործում է ՏՀՏ գործիքները



- Իսրայելի դիրքավորում, որպես գիտելիքի վրա հիմնված տնտեսություն
- Կառավարության կարեւոր դերը բարձր տեխնոլոգիաների հատվածի խթանման մեջ, սակայն ճիշտ ժամանակին դուրս գալով”
- Հ&Մ վրա հիմնված զարգացում
- Արտահանման վրա հիմնված աճ
Անդրազգային կորպորացիաների կենտրոնացված նպատակադրում

Իսրայել.

ՏՀՏ “գերտերության” ստեղծմանը նպաստող գործոններ

- Կրթություն
- Մշակույթ
- Ներգաղթ/հայրենադարձություն
- Կառավարություն

Ներածություն

Կառավարության նպատակային աջակցությունը Իսրայելին հնարավորություն ընձեռեց դառնալ բարձր տեխնոլոգիաների գերտերություն: Կառավարությունը խրախուսում և օժանդակում էր մասնավոր հատվածին, որպեսզի այն կարողանա մրցունակ լինել համաշխարհային շուկայում:
Կառավարությունը պատրաստ էր նվազեցնել իր աջակցության չափը մրցունակ մասնավոր հատվածի կայացմանը զուգընթաց:

- Մեծ ներդրումներ կրթության ոլորտում
- Օտարերկրյա ներդրողների համար արդյունավետ խթաններ
- Ներդրումներ արդյունաբերական մշակումների և հետազոտությունների մեջ (4.6% ՀՆԱ-ի կառուցվածքում, ավելի բարձր քան որևէ զարգացած երկրում)
- Ինկուբատորների և վենչուրային կապիտալի հիմնադրամների ստեղծման ծրագրեր

2005

- 14-րդ ամենաստեղծագործ երկիրը աշխարհում (Dar, 2005)
- Մեկ շնչի հաշվով ԱՄՆ արտոնագրերի քանակով 6-րդ երկիրը աշխարհում (2004)
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտում ընկերությունների ամենաբարձր կենտրոնացումը աշխարհում Սիլիկոնային հարթավայրից հետո
- Աշխարհում ամենաբարձր վենչուրային կապիտալի շրջանառությունը ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսային հարաբերությամբ
- Բարձր տեխնոլոգիաների ոլորտում նորաստեղծ ընկերությունների ամենամեծ քանակը աշխարհում (նորաստեղծ ընկերությունների 50% հաջողության է հասնում):

Կրթություն

- 1920թթ. հիմնադրվեցին առաջին համալսարանները:
- 1948թ-ին աշխարհի մակարդակով բարձրակարգ համալսարանների և հետազոտական կենտրոնների հիմնումը կառավարության գերխնդիրներից էր:
- 1970-ականների սկզբում Իսրայելում ընդամենը 6 համալսարան և հետազոտական կենտրոն կար: Կառավարությունն ազատականացրեց կրթական համակարգը, որի հետևանքով ստեղծվեցին մասնավոր ԲՈՒՀ-երը:
- 1990-ականների սկզբում լավագույն բուհերի բազմաթիվ շրջանավարտեր վերապատրաստում անցան հաշվողական տեխնիկայի և էլեկտրոնիկայի բնագավառում: Պետական ԲՈՒՀ-երը կարողացան փոփոխության ենթարկել իրենց կրթական ծրագրերը բարձր տեխնոլոգիաների ոլորտի պահանջերին համապատասխանեցնելու նպատակով:

Ռազմական ոլորտի խթանիչ դերը

- Զինվորական ծառայությունը հնարավորություն էր ընձեռում ընտրված ամենախելացի երիտասարդ ճարտարագետներին աշխատել հատուկ համակարգչային բաժանմունքներում: Երիտասարդ տարիքում նրանք ծրագրերի կառավարման զգալի փորձ էին ձեռք բերում:
- Ռազմական SS ոլորտը, ուղղակիորեն որևէ շահույթ չհետապնդելով, հետագայում մեծ օգուտ էր տալիս իր ներսում ձեւավորված մասնագետների և մասնավոր հատվածում գործող բարձր տեխնոլոգիաների ոլորտի հետազոտական թիմերի հետ համագործակցության շնորհիվ:
- Բանակի հաշվողական և տվյալների փոխանցման կենտրոնը մշտապես ուսուցանում և վերապատրաստում է ծրագրավորողների, երբ նրանք անցնում են պահեստային բանակային ծառայության:

Մշակույթ

- Եվրոպական երկրներից ներգաղթած առաջին հրեաները սովոր էին լինել ինքնաբավ: Հայրենիքում ազատություն ստանալը ներգաղթածներին հնարավորություն տվեց ճաշակել էգալիտար (հավասարապաշտ) մշակույթի պտուղները, որտեղ մեծ կարևորություն էր տրվում ազատությանը, ռիսկի դիմելուն և անհատականությանը:


ԱՐԺԵՔՆԵՐ

Կատարելագործման ձգտում
(ամբիցիա), ազատություն, ռիսկի
դիմել, անհատականություն, խոսքի
ազատություն

- Հայրենիքում հաստատվելու և հաջողության հասնելու տենչը և Սփյուռքում հաջողության հասած և կազմակերպված հրեաների հետ կապերը Իսրայելի մրցակցային առավելության բանալին էր: Այս կապերը հայրենադարձներին հնարավորություն տվեցին նոր կապեր հաստատել միջազգային ընկերությունների և ցանցերի հետ, ինչպես նաև հանդիսացան հմտությունների/կարողությունների փոխանցման աղբյուր :
- Բարձ տեխնոլոգիաների ոլորտ ներթափանցեցին բազմաթիվ ձեռներեցներ: Նրանցից ոմանք ձախողության մատնվեցին: Սակայն նրանք հուսախաբ չէին լինում և կրկին նոր գործ էին ձեռնարկում, քանի որ առաջնորդվում էին ձախողության մատնվելու մեջ ամոթ բան չկա, եթե այն ազնիվ պայմաններում է տեղի ունեցել”:

Ներգաղթ/հայրենադարձություն

- 1980թթ. վերջում և 1990թթ սկզբում Արևելյան Եվրոպայից ներգաղթածներից շատերը տեխնիկական գծով մագիստրտուրա և սպիրանտուրա ավարտածներ էին, որոնք հաջողությունների ձգտող եւ ստեղծագործ մտքի տեր մարդիկ էին: Ներգաղթը համընկավ համաշխարհային ՏՀՏ ոլորտի արագընթաց աճի հետ, որը մեծ խթան տվեց Իսրայելի ՏՀՏ ոլորտի զարգացմանը :
- Հայրենադարձները խթանեցին ՏՀՏ ոլորտի զարգացմանը, ինչն էլ իր հերթին Իսրայել բերեց ԱՄՆ-ի և Եվրոպական երկրների հրեա գործարարներին, որոնք սեփական նոր ընկերություններ էին հիմնում, կամ էլ իրենց օտարերկրյա գործատուների համար նոր հետազոտական կենտրոններ էին ստեղծում:



1989-1999թթ. 3 մլն. Իսրայել ներգաղթածներ իրենց հետ բերեցին խնդիրների լուծման նոր ստեղծագործ մոտեցումներ, ինչպես նաև Խորհրդային շրջանի տեխնիկական կրթության հզոր քաղաք: 100,000 հայրենադաձ գիտնականները Իսրայելը դարձրեցին աշխարհի ամենառաջատար երկիրը մեկ շնչի հաշվով ճարտարագետների քանակով՝ 140 ճարտարագետ 10,000 բնակչին (երկու անգամ ավել, քան ԱՄՆ-ում) (Մաթիմոփ, 2005)

Կառավարության դերը


Կառավարության քաղաքականությունը և մասնավոր հատվածի նախաձեռնությունները ընկերություններին մղում էին նորարարությունների՝ համապատասխան կանոնակարգումների, ենթակառուցվածքների, ֆինանսավորման աղբյուրների առկայության պայմաններում, որոնք զուգորդվում էին այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են՝ հրեական մշակույթը, հայրենադարձությունը և բարձրակարգ կրթական համակարգը:

Կառավարության հաջողված նախաձեռնությունները:

- ✓ *Ներդրումային խթաններ և ֆինանսական շուկայի բարեփոխումներ*
- ✓ *Կառավարության աջակցություն մասնավոր հատվածի մշակումների և հետազոտական աշխատանքների համար*
- ✓ *Տեխնոլոգիաների ինկուբատորների հիմնում*
- ✓ *Վենչուրային կապիտալի հիմնադրամների ստեղծում*

Ներդրումային խթաններ եւ կապիտալի շուկայի բարեփոխումներ

- Կապիտալ ներդրումների խթանման օրենքը (ԿՆԽՕ) ընդունվեց 1959թ. ամենաթույլ զարգացած շրջանների զարգացման եւ մասնավոր ներդրումների խթանման նպատակով. “Շահառու ձեռնարկության” կարգավիճակ ստացած ընկերություններին տրվում էին կառավարական դրամանշտրիններ (հիմնական միջոցների արժեքի մինչեւ 25%-ը) եւ հարկային արտոնություններ (կախված տեղակայումից եւ օտարերկրյա սեփականության չափից):
 - ԿՆԽՕ-ն ավելի լավ պայմաններ էր տրամադրում օտարերկրյա ներդրողներին: Կանխատեսվում էր, որ բարենպաստ հարկային պայմանները եւ որակյալ աշխատուժի առկայությունը կգրավեն անդրազգային կորպորացիաներին:
- Կապիտալի շուկայի բարեփոխումները մեծացրեցին շուկայի արդյունավետությունը: Դրանք բերեցին պարտադիր պահուստավորման մակարդակի իջեցման, խթանեցին կենսաթոշակային հիմնադրամների (ամենամեծ ինստիտուցիոնալ ներդրողների) ներդրումները պետական պարտատոմսերի եւ բաժնետոմսերի մեջ: Ֆոնդային շուկան տեխնոլոգիապես ամենահագեցվածն էր աշխարհում:




Ստեղծվեցին շատ նոր ընկերություններ, քանի որ վարկ ստանալը դարձել էր ավելի դյուրին: Միջազգային ներդրողների հոսքը Իսրայել մեծացավ 1960 եւ 1970-ական թթ., ներառյալ IBM, Motorola եւ Intel ընկերությունները, մեծ օգուտներ բերելով ամբողջ տնտեսությանը (մուտք նոր շուկաներ, ֆինանսավորում, նոու-հաու). 2003թ., Intel ընկերությունը ուներ 6,000 աշխատողներ՝ հանդիսանալով Իսրայելի էլեկտրոնիկայի ամենամեծ արտահանողը (\$1.6 միլիարդ):

Հետազոտությունների և մշակումների ոլորտին կառավարության աջակցությունը

Այս ուղղությամբ առաջին քայլը իրականացվել է 1960-ականների վերջին հիմնադրելով Գլխավոր գիտնականի գրասենյակը (ՀԳԳ): Արդյունաբերական հետազոտությունների և մշակումների խրախուսման մասին օրենքն (ԱՀՄԽՄՕ) ընդունվել է 1984թ. խթանելու գիտատար, արտահանմանն ուղղված մասնավոր արդյունաբերական հետազոտությունները և մշակումները աճող աշխատուժի զբաղեցման նպատակով դրամաշնորհների, վարկերի և այլ խթանների տրամադրման միջոցով:

ՀԳԳ իրականացնում է և ազգային և միջազգային ծրագրեր (բազային, ընդհանուր և մրցունակության ՀնՄ): MATIMOP-ը (ազգային կենտրոն) ստեղծվել է ՀԳԳ աջակցելու իրականացնել և վերահսկել նախագծերը, որոնց նպատակն է նպաստել իսրայելական ընկերությունների մասնակցությանը երկկողմ և բազմակողմ Հ&Մ ծրագրերին:




Ֆինանսավորվում է առաջարկված ծրագրի բյուջեի 20% մինչև 50%-ը: Միջինը տարեկան 300 միլիոն դոլար է հատկացվել բյուջեից 1000 արդյունաբերական Հ&Մ նախագծերին – ամենամեծ ազգային ծրագիրը:

Հետազոտությունների և մշակումների ոլորտին կառավարության աջակցությունը

Magnet ծրագիր

- Նախաձեռնվել է 1993թ.-ին Իսրայելի ակադեմիայի/համալսարանների և մասնավոր արդյունաբերական ընկերությունների միջև համագործակցությունն ամրապնդելու համար
- Միայն արդյունաբերական ընկերությունների և առնվազն մեկ ակադեմիական հաստատությունից կազմված կոնսորցիումը իրավունք ունի ստանալ ֆինանսավորում




Առաջարկված նախագծերի մինչև 66%-ը
ֆինանսավորվել է: 2005թ.-ին 31
կոնսորցիումներ են գործել Իսրայելի շուկայում:

Հետազոտությունների և մշակումների ոլորտին կառավարության աջակցությունը

ՀԳԳ աջակցությունը նորարարական գործընթացի ծրագրերի համար (Աղբյուր՝ Matimop)

Ռիսկ



Շուկային մոտիկությունը


Տեխնոլոգիական ինկուբատորները

1991-ին կառավարությունը նախաձեռնեց ինկուբատորների ծրագիրը՝ աջակցելու սկսնակ գործարարներին և խորհրդային միության գիտնականներին, որոնք չունեին գիտելիքներ շուկայական տնտեսության մասին, չգիտեին անգլերեն և եբրայերեն, ինչպես նաև չգիտեին ինչպես ձեռք բերել ֆինանսավորում:

Magnet ծրագիրը և բանակի համակարգչային և տվյալների փոխանակման ցանցի կենտրոնը ստեղծեցին նախնական հարթակ ինկուբացիայի հաջող գործընթացի համար:

Տեխնոլոգիական ինկուբատորների ծրագիր


Իսրայելում հիմնադրվել են 24 տեխնոլոգիական ինկուբատորներ: Ծրագրի նպատակը “ադամանդի հղկումն է”- աջակցել արտահանման ուղղվածություն և նորարարական գաղափարներ ունեցողներին՝ տրամադրելով անհրաժեշտ ներդրումներ արտադրանքի մշակման համար: Ծրագիրն արագացրեց սկսնակ գործարարների թցի ավելացմանը (սկսնակ գործարարների համար 1 “արտադրողը”). (Harrel, 2005)



Ինկուբատորների ծրագրի ընդհանուր բյուջեն \$30 միլիոն է: Ֆինանսավորման մինչև 85%-ը տրամադրել է կառավարությունը դրամաշնորհների և արտոնյալ վարկերի տեսքով, իսկ մնացածը՝ վենչուրային ֆոնդերի, ինկուբատորների և ընկերությունների կողմից: Յուրաքանչյուր ինկուբատոր իրականացնում է միջինը 10 նախագիծ:

Վենչուրային կապիտալի հիմնադրամ

- Կառավարությունը էական դեր խաղաց վենչուրային կապիտալի շուկայի ձևավորման գործում: 1990թ.-ին 2 վենչուրային կապիտալի հիմնադրամներ էին գործում արդյունաբերության ոլորտում (\$59 մլն.):
- 1992թ.-ին ՀԳԳ-ն նախաձեռնեց Yozma ծրագիրը խթանելու վենչուրային կապիտալի շուկան՝ տրամադրելով \$100մլն.: Ներգրավվեցին միջազգային վենչուրային կապիտալի հիմնադրամներ՝ ներդրումներ կատարելու բարձր տեխնոլոգիական ընկերություններում: Հիմնադրվեցին 10 միջազգային վենչուրային կապիտալի հիմնադրամներ :



1995-2004թթ. վենչուրային կապիտալի ներդրումները նպաստեցին ՀՆԱ 40 %, և զբաղվածության 15% աճին, ինչպես նաև կազմեցին արտահանման 50% և օտարերկրյա ներդրումների 65%-ը (Harel, 2005).

- Silicon Valley Bank-ը բացեց իր մասնաճյուղը Իսրայելում 2005-ին (Brown, 2004): Իսրայելի վենչուրային ասոցիացիան ակտիվորեն ներգրավում է վենչուրային կապիտալ իսրայելական սկսնակ գործարների համար ամբողջ աշխարհում: Ներկայումս մոտ 50 իսրայելական վենչուրային կապիտալի հիմնադրամներ ներգրավում են միջոցներ ԱՄՆ-ից, Եվրոպայից և այլն (ավելի քան \$12 մլրդ.)

Կառավարության դերը - Իսրայել

Քաղաքականության և կարգավորման միջավայր



	Տեղ
Բարձրագույն կրթություն.....	25
Վարչարարական բեռ.....	38
Հարկային բեռ.....	74
Նոր բիզնեսների գրանցման արագությունը...46	
Բիզնեսի գրանցման հեշտությունը.....	10
Օրենսդիր գործունեության արդյունավետ....	28
SZS վերաբերող օրենսդրությունը.....	23
Դատական համակարգի անկախություն.....	14
Մտավոր սեփականության պաշտպանություն.....	21
Վեճերի կարգավորման իրավական դաշտը...23	
Սեփականության իրավունքի պաշտան-ն.....	26

Կառավարության պատրաստվածությունը

	Տեղ
Կառ. համար SZS-ի գերակայությունը.....	34
Բարձր տեխ. ապրանքների պետգնումները.....	5
Կառավարության SZS տեսլականը.....	19
Պետ. սուբսիդիաները Հ&Մ-ի համար.....	7
Էլ.-մասնակցության համաթիվ.....	30
Էլ.-կառ-ման պատրաստվ. համաթիվ.....	20

Կառավարության կողմից օգտագործումը

	Տեղ
SZS-ների խթանման գծով կառավարության հաջողությունը.....	17
Ինտերնետ ծառայությունների առկայությունը.....	34
SZS արտադրողականությունը.....	19
SZS տարածումը.....	16



Հետևություն

Կառավարության դերը, զուգորդվելով հրեական մշակույթի և ներգաղթի հետ, էական էր Իսրայելի ազգային մրցակցային առավելությունների ստեղծման գործում.

- ✓Ստեղծելով առաջնակարգ բարձրագույն կրթական համակարգ;
- ✓Ապահովելով կայուն մակրոտնտեսական միջավայր;
- ✓Արդիականացնելով Ֆինանսական շուկաները (մատչելի դարձնելով վարկերը);
- ✓1960-1970-ականներին կիսելով բարձր ավելացված արժեք ստեղծող ընկերությունների ռիսկը;
- ✓Խրախուսելով Հ&Մ ծրագրերի ավելացումն արդյունաբերական ձեռնարկությունների կողմից;
- ✓Խրախուսելով սերտ համագործակցություն գիտահետազոտական հաստատությունների և մասնավոր արդյունաբերական ընկերությունների միջև;
- ✓Աջակցելով արտասահմանյան Հ&Մ կապիտալի ներգրավմանը արդյունաբերական ձեռնարկությունների կողմից;
- ✓Զարգացնելով ձեռնարկատերերի անհրաժեշտ հմտությունները բարձր տեխնոլոգիական արտադրություններում (ԽՍՀՄ ներգաղթողներ և ներկա քաղաքացիներ) տեխնոլոգիական ինկուբատորների ծրագրերի միջոցով՝ ապահովելով ազգային և միջազգային վենչուրային կապիտալի միջոցներ (երկրորդ փուլում).

Շնորհակալություն

Այս նյութի էլեկտրոնային
տարբերակը կտեղադրվի

www.ev.am

կայքէջում